

ԼՈՒՄԻՆԵ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԼԻՄ ԵՒ ԿՏՈՒՅ ՄԵՆԱՍՄԱՆՆԵՐԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՕՐԵՐԻՆ

Նայոց վանքերի և մենաստանների մեջ կարևոր և սրեղծարար դեր են ունեցել Վանա ծովակի Լիմ և Կտուց կղզիների Ս. Գևորգ և Ս. Կարապետ անապատները: Կղզիները գտնվում են Վանա լճի հյուսիսարևելյան կողմում և միջնադարում եղել են նշանավոր մենաստաններ, հոգևոր-մշակութային օջախներ՝ ըստ ավանդության հիմնադրված Ս. Գրիգոր Լուսավորչի կողմից: Սրանք նաև գրչության և ձեռագրապահպանման նշանավոր կենտրոններ էին, որոնցում գրվել, ընդօրինակվել, նկարագրողվել ու կազմվել են բազմաթիվ ձեռագրեր: Քանի որ Լիմ և Կտուց մենաստանների պարամոնությունն ու նրանց դարավոր մշակութային գործունեությունը դուրս են մեր հողվածի ուսումնասիրության շրջանակներից, ուստի ներկայացնենք միայն, թե ի՞նչ վիճակում էին գտնվում մենաստանները Մեծ Եղեռնի օրերին՝ մեծապես հիմնվելով մեզ հասած վկայությունների, ականատեսների հուշերի, փրկվածների պարամոնների վրա:

Նարկ է նշել, որ բոլոր դարերում ասպատակությունների և կոտորածների ժամանակ Վանա լճի ափամերձ շրջանների հայ բնակչությունը սպասարանել է լճի կղզիներում: Մենաստանները թշվառ ժողովրդին փրկելու, ամոքելու համար ոչինչ չեն խնայել. րվել են օթեան ու սնունդ, պահել ու պաշտպանել՝ մինչև վրանգն անցնելը: Նամիդյան արյունաբերու ջարդերի ժամանակ՝ 1895-1896 թթ., Լիմ և Կտուց մենաստանները կրկին սրանձնում են անպաշտպան բնակչությանը պաշտպանելու դերը, թեև ամբողջությամբ կողոպտվում են մենաստանների դրսի տները<sup>1</sup>: Այս ժամանակ Աղթամարի վանքը հայտնվում է բավականին ծանր վիճակում: Արսեն վրդ. Մարգարյանը Ս. Էջմիածին ուղարկած վիճակագրական իր տեղեկագրի մեջ (1896 թ., հուլիս) նկարագրում է Վասպուրականի տարբեր գավառների տիրույթի վիճակը համիդյան կոտորածների ժամանակ և դրանից հետո: Աղթամարի մասին նշում է, որ միաբանները, զգուշանալով քրդական նավերի հարձակումներից, տեղափոխվել են Կտուց, իսկ վանքի դրսի տունը, ուր գտնվում էին վանքապարկան հարստությունները, պահվում վանքի անասունները, ամբողջությամբ թալանվել է<sup>2</sup>: Աղթամարի վերջին կաթողիկոսը՝ Խաչատուր Շիրոյանը, վախճանվում է 1896 թ., և երբեմնի ծաղկուն վանքը իր գոյությունը շարունակում է բավականին խղճուկ վիճակում՝ ունենալով մի քանի միաբան: Կաթողիկոսական տեղապահ նշանակվում է Արսեն վրդ. Մարգարյանը<sup>3</sup>: 1909-ից նրան հաջորդում է Նովակի եպիսկոպոս Խոսրեղյանը<sup>4</sup>:

1915 թվականը դարձավ հայ ժողովրդի դարավոր պարամոնության մեջ ամենատրեքավանը: Օսմանյան կառավարության հրամանով սկսվեց հայ ժողովրդի բնաջնջումն իր իսկ

1 Վանա լճի երեք վանքերն էլ ունեցել են դրսի տուն՝ շինված ծովափին վանքերի տնտեսական կարիքների համար: Դրսի տները բաղկացած էին միաբանների համար կացարան-շենքերից, մթերքի շրմարաններից, գոմերից. ունեցել են նաև դպրոցի շենքեր և համարվել են կղզիների նավահանգիստները:

2 Տե՛ս ՄՄ, Կաթողիկոսական դիվան, վավ. 236, թ. 18, 31, 33: ՆԱՎ, ֆ. 57 (Կաթող, դիվան), ց. 5, գ. 4, թ. 4-5:

3 1909 թ. հեղափոխական գործիչ Իշխանը իր համախոհներով հաստատվում է Աղթամարում: Իշխանի և Արսեն վարդապետի միջև լինում է անհաշտություն, և վերջինս սպանվում է: Տե՛ս **Ռուբեն**, Նայ յեղափոխականի մը յիշարակները, հ. 2, 1983, Բլյրոյթ, էջ 132-133: «Արարատ», Վաղարշապատ, 1909, էջ 825-826:

4 Տե՛ս «Արարատ», 1896, էջ 245-249, 1911, էջ 285-287:

բնօրրանում: Վասպուրականի մի շարք շրջաններում կոպորածները կազմակերպում է Ջեղերթ բեյը՝ իրեն աջակից ունենալով գորավար Նոգայեսին<sup>5</sup>: Նայկական բնակավայրերի վրա հարձակվում էր թուրքական կանոնավոր բանակը՝ զինված հրացաններով և թնդանոթներով, որին միանում էին շրջակայքում ապրող զինված բրդերը: Քանի որ Առաջին աշխարհամարտի գորահավաքի պատճառով հայկական գյուղերում քիչ փղամարդ էր մնացել, սակավ էին նաև զենքի պաշարները, ուստի գրեթե անհնար էր դարձել մի քանի հազարի հասնող կանոնավոր թուրքական զորքի և նրան միացած բրդերի դեմ պայքարելը: Խաթարվում է հայկական գյուղերում խաղաղ կյանքը, անմեղ հայ բնակչությունը գոհ է դառնում թուրք և բուրդ վայրագ խուժանի աներևակայելի բարբարոսությունների: Այնուհանդերձ, հայերը դիմադրություն են ցուցաբերում և կռվում մինչև իրենց արյան վերջին կաթիլը: Բնակիչների մեծ մասը, հանուն ազգի և քրիստոնեական հավատքի, նահապետակվում է. փրկվել կարողանում են միայն սակավաթիվ անձինք: Բնակչությանը կոպորելուց և փրկահանելուց հետո թշնամին թալանում էր փները, քանդում և հրկիզում եկեղեցիները, ոչնչացնում դարերով կերպված մշակույթի մեծարժեք նմուշներ: Ընդ որում՝ նախապես հրաման կար, որ ոչ մի թուրք կամ բուրդ որևէ հայի կյանքը չփրկի. «...դարապեկցի քիւրք մը կը պահէ երկու հայ, կիմանան ու նախ քիւրքին կը սպանեն և ապա հայերուն»<sup>6</sup>: Երբ Լիմ անապատի դրսի փան մտրակայքում չորս զինված հայ փղամարդու հաջողվում է հարձակվել թշնամուն փամփուշտ փանող թուրք ռափկանների վրա և խլել արկղերը, դրանցից մեկի մեջ գտնվում է Ջեղերթի գրությունը, որում հայտարարված էր ջիհապ (իմա՝ սրբազան պատերազմ) և հրահանգված էր անխնա կոպորել բոլոր հայերին՝ առանց սեռի և փարիքի խարություն<sup>7</sup>:

1915 թ. ապրիլյան դժնդակ օրերին Վանա լճի ափամերձ հայ ազգաբնակչության համար **Լիմ** և **Կտուց կղզիները** դարձան օթևան: Այստեղ կարողացան պապսպարվել, իրենց կյանքը փրկել ափամերձ գյուղերից հազարավոր հայեր: Ժողովուրդը գյուղից գյուղ փախչելով, իրար օգնելով մտքներում էր ծովափին՝ Լիմ կամ Կտուց հասնելու նպատակով: Լիմ անապատի վանահայր Նովիաննես վրդ. Նյուայանը Ամենայն Տայոց Գևորգ Ե. Կաթողիկոսին հղում է հետեյալ հեռագիրը. «...Վասպուրականը որպէս ապստամբ և հակառակ ներկայացուցում է թուրք կենդրոնական կառավարութեան, և արքայազատեր հրովարտակով ազատ ու համարձակ սկսեալ ապրիլ 6-էն մինչ ապրիլ 14-ը, այս փողերը գրուած թուլէին փակաին կկոպորուին անմեղ հայեր, և քար ու հողը կներկուի հայու անմեղ արիւնով: Միմիայն մօտ 3000 երիտասարդներով և նոյն թուով կոյսերով և հարսներով պատուած ծրարուած կամք Լիմ Անապատի կղզիի մէջ՝ համրելով օրհասականնիս: Ոչ մի կողմէ օգնութիւն, ոչ մի կողմէ փրկութիւն Աստուծմէ ի գաբ, ի սէր Աստուծոյ, Տայր, Տայր ողորմէ մեզ, անմիջական և երագահաս ըրէ օգնութեան Ձեռքը և փրկութեան ժամը...» (14 ապրիլ, 1915 թ.)<sup>8</sup>: Նովիաննես վանահայրը սրբեղծված դժոխային իրավիճակում հոգում էր թե՛ վանքի շեն մնալու, թե՛ ձեռագրերի և թանկարժեք սպասքի պահպանման, թե՛ հազարավոր անմեղ հայերին Լիմում ապաստան փախու և մահից փրկելու խնդիրները: Կոպորածի ամենամանր պահերին նա կա-

5 Չորավար Նոգայեսն ուղղարկված էր Գերմանական կառավարության կողմից: Տարիներ անց նա հեղինակում է գիրք, որի մի հարվածը վերաբերում է Վանի կոպորածներին և վանեցիների ինքնապաշտպանությանը. փրեն **Rafael de Nogales**, *Four Years Beneath The Crescent*, London, 1926:

6 «Տայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում». վերապրածների վկայություններ (փաստաթղթերի ժողովածու), Երևան, ՏԱՄ, 2012, կազմ.՝ Գ. Ավագյան, խմբ.՝ Ա. Վիրաբյան, հ. Ա., Վանի նահանգ, էջ 110:

7 Տե՛ս անդ, էջ 132:

8 «Արարար», 1915, էջ 177-178:

րողացավ կազմակերպել պաշտպանություն, նավեր ուղարկել ափ ու հնարավորին չափ շարժել հայերի բերել կղզի: Անապար վեց նավ ուներ, նավեր կային նաև ափամերձ գյուղերում:

Լիմ և Կրուց կղզիներում պարսպարկելու մասին հերագայում վկայել են իրենք իսկ՝ փրկվածները: Լիմ կարողացել են փրկափոխվել հարկապես **Թիմարի** շրջանի<sup>9</sup> գյուղերից: Այսպես, ապրիլի 8-ին մոտ 500 զինված թուրքեր ու քրդեր հարձակվում են **Ասրվաձաձին (Ասպարաձին կամ Տիրամայր)** գյուղի վրա, ուր նրանց դիմադրում են շուրջ 30 զինված փրկամարդ, կանայք և երեխաներ: Սակայն դիմադրողների բնության և գեների պակասության պարճառով՝ գոյամարտը միայն մի քանի ժամ է տևում: Գյուղի ողջ բնակչությունը մարտնչում է թշնամու վայրագություններին: Բնակիչներից միայն մի փոքր մասն է փրկվում՝ այն էլ մի կերպ հասնելով ափ և Լիմից ուղարկված նավերի շնորհիվ հասնելով կղզի: Վերապրածները վկայում են հետևյալը. «Իրիշար գիւղի քիւրք աղան մօտ 500 միլիոնը ապրիլ 8-ին կը յարձակուի գիւղին վրայ: Գիւղին մէջ գարնուած մօտ 30 զինուած փրկամարդիկ կը դիմադրեն և կարգիլեն մի ժամանակ թիւրքերու ներս խուժելը, սակայն դիմադրութիւնը միայն երեք ժամ կը տևէ: Դիմադրողները թէ՛ բնութեան և թէ՛ փամփուշտի պակասութեան պարճառաւ կընկրկին ու ասոնցմէ մաս մը միայն կը ճողոպրի, իսկ մնացած խոշոր մեծասնութիւնը կիներու և երեխաներու հետ կը մարտնչին թիւրքերու վայրագութեանց: Թիւրքեր ազատօրէն գիւղը մարտնչելով կը սկսին անխնայ կոտորել: Բնաջինջ կըլլայ գիւղի բնակչութեան մեծագոյն մասը, մի մասին կը լեցնեն ծովը, ոմանց կը մորթեն, կայրեն և այլազան փանջանքներով կսպանեն: Զահել կիները կը մնան ձեռքերնին և փրկի կունենան բռնաբարումներ և առեւանգումներ: Գիւղի բնակիչներէն մէկ մասը միայն կը յաջողին հասնիլ ծովափը ու փոխադրիլ մօտիկ Լիմ կղզին»<sup>10</sup>: Եւս մեկ վերապրած Ասպարաձին գյուղի կոտորածի և Նովհաննես վանահոր ուղարկված օգնության մասին պարմում է հետևյալը. «Պաշարում են գյուղը, սկսվում է կռիվը 400-500 թուրք և քուրդ հրոսակների և 25-30 հայերի միջև: Ահավոր դրություն էր: Թշնամին շրջապարկ էր. միայն մի ճանապարհ էր մնացել, այն էլ՝ ծովն էր: Տղաները որոշում են մինչև վերջ կռվել: Բայց դրությունը հուսահատական էր: Եւ ահա՛ հրաշք պարահեց: Մեր վանահայր Նովհաննես ծայրագոյն վարդապետ Նյուսյանը կազմակերպեց օգնությունը, և նավով գնացինք, հասանք օգնության Օվոնի խմբի փրկանքին (իմա՛ Նովհան Դարբինյանի խմբին - Լ. Թ.)»<sup>11</sup>:

Թուրք և քուրդ խուժանին դիմադրելու համար փրկարհիպցի Սիրուն Սարոյանը (դաշնակցական) մեկտեղել է հավաքում Թիմարի շրջանի **Սոսրաթ, Շահգալղի, Գոմս** և **Փիրկարիլ** գյուղերի բնակչությանը և փորձում առաջանալ դեպի Լիմ: Թեև ճանապարհին նրանք ենթարկվում են թուրք-քրդական գործի հարձակմանը, սակայն կղզուց նրանց օգնության են հասնում շուրջ 60 զինյալներ. «Կռիւր կը տևէ ամբողջ օրը, հայերը հետգիտել կը թուլանան, բայց նոյն միջոցին Լիմ կղզիէն օգնութեան կը հասնի ալջաազցի «Կոպիտ» խումբ կոչուածը (իմա՛ Նովհան Դարբինյանի խումբը - Լ. Թ.), որ ուներ մօտ 60 զինուած ու կտրիճ կտուղներ»<sup>12</sup>:

9 Թիմարի գյուղախումբը կամ գավառակը գրնվում էր Վանի նահանգում, Վան քաղաքից հյուսիս, Վանա լճի արևելյան ափամերձ շրջանում, Լիմ կղզու դիմաց: Նամապարասխանում էր Մեծ Նայքի պարմական Վասպուրական աշխարհի Բոզունիք գավառին և Առբերան գավառի մի հարվածին:

10 «Նայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում». վերապրածների վկայություններ, հ. Ա., էջ 109-110. Ղեկնող քահանա Սարոյանյանը և իրիցկիներ համառոտ կերպով շարադրել են Թիմարի որոշ գյուղերում փրկի ունեցած կոտորածի մասին: Տե՛ս նաև Ահարոն Գրիգորյանի վկայությունը, անդ, էջ 121-123:

11 Վահան Կարանյանի վկայությունը տե՛ս **Վ. Սվազյան**, Նայոց ցեղասպանություն. ակնապրես վերապրողների վկայություններ, Երևան, 2011, էջ 128:

12 Ղեկնող քահանա Սարոյանյանի և երեցկնոջ վկայությունը. «Նայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում». վերապրածների վկայություններ, հ. Ա., էջ 110-111:

Թշնամին փորձում էր գրավել նաև Լիմ անապարհի դրսի փունը, որպեսզի փակեր փրկության ճանապարհը, սակայն հայերին հաջողվում է իրենց ձեռքում պահել դրսի փունն ու նավերով փրկափոխվել կղզի<sup>13</sup>: Այն մասին, որ **Գոմսի** բնակիչների մեծ մասը այլ գյուղերից փախածների հեր կարողացել է դիմակայել 1500-ից ավելի զինված թուրքերին ու քրդերին և պարսպարվել Լիմում, վկայում է նաև Մկրտիչ քին. Խաչատրյանը. այսպես, 20 զինված երիտասարդներ երեք ժամ ուժեղ դիմադրություն են ցույց փախիս և, պաշարման շրջան պարտելով, դուրս գալիս ու, միանալով ծովափին խոնաված ժողովրդին, շարժվում դեպի Լիմ անապարհ<sup>14</sup>:

Ասպարածինը և հարեան գյուղերը ավիրող ամբոխն այնուհետև հարձակվում է **Ջանիկ, Քոչյան** և մերձակա գյուղերի վրա: Բնակչությունը դիմում է ինքնապաշտպանության, սակայն մեծ մասը կորոպվում է: Սակավաթիվ մարդկանց է հաջողվում մոտենալ ծովափին և այնտեղից անցնել Լիմ<sup>15</sup>: **Արևեր** և հարեան ութ գյուղերի երիտասարդությունը երեք օր հերոսաբար դիմադրում է շուրջ 3000 թուրք զինվորներին և քրդերին՝ զինված հրացաններով և 2 թնդանոթներով. գոյամարտի ընթացքում հայ բնակչությունը քաշվում է Լիմ անապարհ և փրկվում կոտորածից<sup>16</sup>: **Էրերին (Էրերնա)** գյուղի բնակիչները, կռահելով իրենց վերահաս ճակատագիրը, նախապես պարտաստվել էին պաշտպանության: Մտնելով գյուղ՝ թշնամին սկսում է անխնայ կոտորել մարդկանց և հրկիզել փոխեր: Գյուղից մի խումբ զինված այրեր բարձրանում են մոտակա Ս. Սահակ վանքի լեռը՝ իրենց երեսից փանելով թշնամուն. անհավասար մարտում նրանք բոլորն էլ նահապարկվում են: Գյուղացիների զգալի մասը, թեև թշնամու վայրագություններին ենթարկված, կարողանում է փրկափոխվել Լիմ, իսկ նրանք, որ ինչ-ինչ պարճառներով մնում են գյուղում, անգթորեն սպանվում են<sup>17</sup>:

**Խժիշկը** ավիամերձ գյուղ էր. ուստի այլ գյուղերից շարերն այստեղ էին փախչում՝ Լիմ հասնելու հույսով: Ինչպես հեղափոխում պարտում են այս գյուղից փրկվածները՝ կղզին իրենց միակ ապավենն էր, սակայն այնտեղ հասնելու համար նավեր չունեին: Բարեբախտաբար գյուղ են գալիս 5-6 նավ, որոնք փրկափոխում էին Այջավազի հայերին. վերջիններս միանում են Խժիշկում հավաքվածներին: Նախորդ առավոտ թշնամու շուրջ 1500-ի հասնող կանոնավոր զորքը պաշարում է գյուղը: Դիմադրողները սակավաթիվ էին, և օրհասական այդ պահին նրանց են միանում ալջավազցի, արճեշցի ու փիրկարիպցի զինյալներ՝ Սիրունի և Ղովհանի գլխավորությամբ: Զինված երիտասարդները ամբողջ մեկ օր դիմադրում են, մինչև կանայք ու երեխաները նավերով հասնում են Լիմ՝ իրենց հեր փանելով նաև այլուր և այլ մթերքներ: Դիմադրության երրորդ օրը կոպողները ետ, փանելով որ անհնար է դառնում հակադարձել սրվարացող թշնամուն, նավերով հեռանում են կղզի<sup>18</sup>:

Այսպիսով, Թիմարի շրջանի **Աստվածածին, Սոսրաթ, Շահգալղի, Գոմս, Փիրկարիպ, Ջանիկ, Քոչյան, Արևեր, Էրերին, Խժիշկ** գյուղերից մի քանի հազար մարդ է փրկվում՝ Լիմ գնալով: Թիմարի շրջանից ոմանք էլ հասնում են Վան և միանում Այգեաբանի դիմադրողներին<sup>19</sup>:

13 Փիրկարիպի կոտորածի մասին փնտրելու նաև Ղովհանես Մանուկյանի վկայությունը, անդ, էջ 144:

14 Մկրտիչ քին. Խաչատրյանի վկայությունը, էջ 125-126:

15 Արմենակ Միրոյանի և Մկրտիչ Սարգիսյանի վկայությունները, էջ 142-147:

16 Գրիգոր Խաչատրյանի վկայությունը, էջ 123-125:

17 Լուսիկ Շահբաղյանի, Գրիգոր Նազարյանի, Վարդան Գալուստյանի վկայությունները, էջ 126-131:

18 Մովսես Դավթյանի, Վարդան Ղովհանիսյանի, Բարսեղ Սահակյանի վկայությունները, էջ 132-135:

19 **Ա. Փոխարևան**, Ինքնապաշտպանության կռիւներ Արճակի շրջանում և Թիմարում. «Վասպուրական» (հոդվ. ժող.), Վենետիկ - Ս. Ղազար, 1930, էջ 52-54:

**Արճեշի** գավառակում<sup>20</sup> հայ ազգաբնակչությունը եւս դիմել է ինքնապաշտպանության, սակայն գենքի պաշարների բացակայության պարճառով գավառակի հայությունը ենթակա դարճավ թշնամու բռնություններին. գրեթե բոլորին դաճանարար կոտորեցին, շար կանանց եւ երեխաների գերի փարան՝ պարտադրելով մահմեդականություն ընդունել: Փրկվել կարողանում են սակավաթիվ մարդիկ՝ կան թաքնվելով անմարդաբնակ վայրերում, կան գերության մեջ մնալով մինչեւ հայ կամավորների եւ ռուսական զորքերի գալը, կան ապավինելով Լիմ անապարին: Արճեշի **Նաղի** գյուղից մի փրկված վկայում է, որ «կարգ մը ընփարանքներ փախչելով նառով անցանք Լիմ»<sup>21</sup>:

**Արճկե-Ալջավազի**<sup>22</sup> գավառակում թուրք-քրդական ավազակախմբերի հեղ բախումներ լինում են դեռեւս փեղրվար ամսին: Ժողովուրդը պայքարի է դուրս գալիս մի քանի հարյուրի հասնող թշնամու դեմ, որ մտնում էր հայկական բնակավայրերը՝ իրականացնելու թուրքական կառավարության վայրագ հրամանը. «Ամեն փուն 20-30 քիւրդեր կը լեցուին, ամեն գազանութին ի գործ կը դնեն գիղացոց վրայ, կը թալանեն, կը բռնաբարեն, կը կողոպտեն, կը ճնճեն»<sup>23</sup>: Այս ժամանակ է, որ Արճկե-Ալջավազի բոլոր գյուղերի մեջ կազմվում են մարտական-դիմադրական զինված խմբեր՝ արճրացի Նովհան Դարբինյանի (դաշնակցական) գլխավորությամբ: Թշնամու հեղ յուրջ ընդհարում է լինում հարկապես Արճկեի շրջանի **Առեն** գյուղում: Գյուղի քահանան, մելիք Աբրահամը եւ ռես Սարգիսը, գյուղի մի թաղն ամրացնելով, բնակիչներին թաքցում են այնպեղ: Գյուղ են մտնում հարյուրավոր զինված քրդեր. նրանք պահանջում են ոչ միայն իրենց հանճենկ հարստությունները, այլեւ կանանց եւ աղջիկներին: Քահանան, ռեսը եւ մելիքը միաբերան պարասխանում են. «Նարսներու, կիներու փրերը մեռած չեն, որ դուք ձեր ուզածն ընէք»<sup>24</sup>: Սկսվում է զինված ընդհարումը շուրջ 25 հայ փղաների եւ մեծաքանակ թշնամու միջեւ: Երբ սակավաթիվ հայ զինյալներին օգնության է հասնում Նովհան Դարբինյանն իր զինակիցներով, կռիվն ավելի է սաստկանում. սպանվում են քրդերի հրամանատարները, եւ թշնամին դիմում է նահանջի: **Առեն**, նաեւ՝ **Առնջկուս** եւ **Արճրա** գյուղերի բնակչության մեծամասնությունը շարժվում է դեպի ճովափնյա **Կարաբեշիշ** եւ **Վիշկացոուկ** գյուղերը: Ապրիլյան կոտորածների ժամանակ Կարաբեշիշում եւ Վիշկացոուկում հավաքված ժողովուրդը նավերով անցնում է Լիմ:

Մեծ Եղեռնի օրերին ինչպես Թիմարի, այնպես էլ Արճկե-Ալջավազի գավառակի հայ ազգաբնակչության համար միակ փարոսը Լիմ անապարն էր: Այսպեղ ապաստանելով՝ իրենց կյանքն են փրկում **Առեն**, **Առնջկուս**, **Արճրա**, **Կարաբեշիշ**, **Վիշկացոուկ** եւ այլ գյուղերի բնակիչներ: **Առեն** գյուղում, արդեն իսկ կոտորածների յուրն առած լինելով, գյուղացիները կարողանում են թաքնվել նախապես իրենց պարտաստած թաքստոցներում, մինչեւ Լիմից նրանց օգնության են գալիս եւ նավով փրկափոխում կղզի<sup>25</sup>: **Առնջկուս** գյուղում բնակչների

20 Արճեշի գավառակը գրնվում էր Վանի նահանգում, փարածվում Վանա լճի հյուսիսարեւելյան ճովախորշից մինչեւ Ծաղկանց լեռները: Կենտրոնը Արճեշ քաղաքն էր: Նամապարասխանում էր Մեծ Նայքի պարմական Տուրուբերան աշխարհի Աղիովիք գավառին:

21 Օհան Սարգսյանի վկայությունը. «Նայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում». վերապարածների վկայություններ, հ. Ա., էջ 249:

22 Արճկեի գավառակը գրնվում էր Վանի նահանգում, փարածվում Վանա լճից հյուսիսարեւմուտք, լճի եզերքով, Խյաթի եւ Արճեշի միջեւ: Կենտրոնը Արճկե քաղաքն էր: Նամապարասխանում էր Մեծ Նայքի պարմական Տուրուբերան աշխարհի Խորխոռուկյաց գավառի մի հարվածին:

23 Խմբապետ Նովհան Դարբինյանը վկայել է Արճկեի որոշ գյուղերում փրկի ունեցած կոտորածի մասին. փրկե՛ն «Նայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում». վերապարածների վկայություններ, հ. Ա., էջ 280:

24 Անդ, էջ 281:

25 Անդ, էջ 279-283. փրկե՛ն Ավո եւ Վահան Քոչարյանների վկայությունները, էջ 270-273:

մեծ մասը կոտորվում է: Ողջ են մնում միայն բջերը՝ բողարկվելով ծովափնյա թումբերում կամ գյուղի Ս. Նարություն վանքում, որը փեր Խաչապուր քահանայի նախաձեռնությամբ վերածվել էր պապապարանի: Ինն օր հետո Լիմ անապատից կարողանում են կազմակերպել մագապուրձ եղածների փեղափոխությունը<sup>26</sup>:

**Կարաբեշիշի** և շրջակա գյուղերից այնպեղ հավաքված բնակչությանը փրկելու համար գյուղի գինված փղամարդկանց Լիմից միանում են պաշտպանության՝ Նովհանի և Սիրունի 100 հոգանոց խմբերը և, դիմադրելով մի քանի անգամ իրենց գերազանցող թշնամուն, ժողովրդին փոխադրում են Լիմ. «...Կարաբեշիշ գիողը, ուր մնացած կին-երեխան կը բերեն Լիմ Անապատը, ուր ապաստանած էր 8000-ի մօտ ժողովուրդ, որու մեծ մասը կը կազմէր Թիմար գաւառի հայութիւնը: Լիմ անապատին մէջ կային 6 նաւեր, ծովափը, վանքի դրսի փան մօտերը ապաստանած էր հազարաւոր ժողովուրդ, որը պէտք էր անմիջապէս ներսը՝ կղզին փոխադրել, որպէսզի խուժանը և կամ թիւրք պաշխպօզուկ գինուորները չգային կոտորէին: Ուստի Ալճաւազի արճրացի պարոն Յովան և թիմարցի պարոն Սիրուն, 100 գինուորի գլուխ անցած, թիւրքերէն և քիւրդերէն բաղկացած 800 հոգանոց խումբի մը հետ սաստիկ կտուի կը բռնուին մինչև իրիկուն Արեր գիողին մօտերը»<sup>27</sup>: Լիմից ուղարկված նավերի շնորհիվ կարողանում են փրկվել նաև **Վիշկացուկի** և մոտակա բնակավայրերից այնպեղ հավաքվածները: Վիշկացուկի ժողովրդի մի մասը նավերով փեղափոխվում է դեպի Թիմարի Ամկու-Բերդ գյուղը. ծովափնյա այս բերդում հայերը կարողացել էին պաշտպանություն կազմակերպել<sup>28</sup>:

Այսպիսով, մինչ խմբապետ Նովհանն իր գինակիցներով և փարբեր գյուղերից նրանց միացած փղամարդիկ դիմակայում էին մի քանի հազարի հասնող՝ հրացաններով և թնդանոթներով զինված թշնամուն, հնարավորություն էր ընձեռվում Լիմ անապատից ուղարկված նավերով փարբեր գյուղերի հայ բնակչությանը փեղափոխել կղզի: Ամեն գիշեր Լիմից երկու նավ էր գնում ծովափնյա շրջանները և հավաքում բնակչությանը. «Լիմ Անապատէն արճրացի խմբապետ պարոն Յովան նաւեր կը դրկէ (գիշերները) և կը փեղափոխէ կղզին՝ Առէն, Առնջկուս, Կարաբեշիշ, Արճրա և այլն գիողերու օղուշաղը (կին, երեխա)»<sup>29</sup>: Խմբապետ Նովհանը վկայում է, որ այսպես ավելի քան 600 մարդ է ազատվում մահից<sup>30</sup>: Նա նշում է նաև, որ **Կոճերերի, Խոռանցի, Բարկաթի** և **Կուզելի** (Ղուզել կամ Գյուզել) գյուղացիները եւս նավերով հասնում են Լիմ<sup>31</sup>:

**Կոճերերը (Կոճերեն)** ծովափնյա գյուղ էր, ուստի շրջակայքից՝ **Արծկեից, Վերին Սիփանից, Կուզելից, Անուշ-աղբյուրից**, ով կարողացել էր այսպեղ էր փախել՝ Լիմ հասնելու ակնկալիքով: Գյուղն ուներ նավեր, սակայն թուրքերը դրանք գավթել էին, և միայն մեկ հնամաշ նավ էր մնացել: Երբ թուրքերի ու քրդերի մեծաքանակ բազմությունը պաշարում է գյուղը և հարձակվում անգն բնակչության վրա, վերջիններիս զգալի մասը կոտորվում է: Այլավազցի մի վերապրած այս է պատմում. «Նասնելով Կոճերեր՝ հետեյալը փեսանք. **Վ. Սիփան, Անուշ-Աղբիւր** և **Կոճերեր** գիողի ընդամենները բոլորովին մերկացուցած, վրա-

26 Խաչապուր քին. Զաքարյանի վկայությունը, էջ 275:

27 Նշան Անոյանի և Մուշեղ Գետրգյանի վկայությունները, էջ 295-296:

28 Գյուլիգար Սարգիսյանի և Կարապետ Ղազարյանի վկայությունները, փրն անդ, էջ 307-309:

29 Անդ, էջ 309:

30 Նովհան Դարբինյանի վկայությունը, էջ 280-283:

31 Անդ, էջ 281:

նին մի մի խսիրի կտոր, լեցած էին գիղին մէջ անտէր անտիրական: Քահանայի հետ միասին սկսանք մի նաւ ճարելու մասին մտածել, երբ մելիք Կարապետի տղան՝ Նշանը յայտնեց, որ իրենց նաւը մի կողմով ծակուած կը գտնուի ծովափը»<sup>32</sup>: Գյուղում եղած տղամարդիկ, թշնամու դեմն առնելով, փորձում են կազմակերպել բնակչության փրկությունը: Տեղավորելով իրենց հին եւ միակ նավակի մեջ հնարավորին չափ շար կանանց եւ երեխաների, վերցնելով բավականաչափ ալյուր՝ հասնում են կղզի, ուր միանում են այնտեղ ապաստանած հազարավոր մարդկանց. «...իրենց թաքցուցած առագաստի կտաւը կը բաշեն նախն վրայ ու աննկատ կը հեռանան Լիւն Անապար, ուր համախմբուած էին նաեւ 8000-ի չափ ժողովուրդ (թիմարցի, արճէշ-ալճաւագցի եւ այլն)»<sup>33</sup>: Այնուհետ Լիւնից մի խումբ այրեր զինված վերադառնում են Կոճերեր եւ, կովի բռնվելով մոտ 400 քրդերի հետ, հաջողում են Լիւն տեղափոխել եւս մի քանի հարյուր մարդ. «Զինուած կոճերէնցիք դիրք կը մտնեն խաչերու քարերուն ետեւ, մինչ նաւը հետզհետէ կը լեցուի 600-ի չափ կին ու երեխաներով (կոճերէնցի, վերին սիփանցի, գիւզեցի, անուշ-աղբիւրցի, ալճաւագցի), որոնք համախմբուած էին Կոչերէն գիւղը: 15 մէշուկի չափ ալ ալիւր ալ կառնուի նախն մէջ»<sup>34</sup>: Նրանք Լիւնից եւս մի քանի անգամ գնում են Կոճերեր, հավաքում այնտեղ անպաշտպան մնացած հայերին եւ բերում կղզի:

Այսպիսով, Լիւն են հասնում նաեւ **Արծկեից, Կոճերեր, Վերին Սիփան, Կուզել (կամ Գյուզել), Անուշ-աղբիւր, Խոռանց, Բարկաթ** եւ այլ գյուղերից: Այլազանցիցներէից ոմանք կարողանում են հեռանալ լեռները: Ներսէսը մի մասը եւս տեղափոխվում է Լիւն անապար, մյուսները թաքնվում են Թիմարի շրջանի քարեր գյուղերում. «Կտորածէ ազատուած ալճաւագցիները ապաստանեցան լեռները. գիւղերը կիջնէին միայն գիշերները՝ հաց կամ որեւէ ուտելիք ճարելու, իսկ յետոյ տեղափոխուեցան մի մասը՝ Լիւն Անապար, իսկ միւսները՝ Թիմարի շրջանի գիւղերը՝ մինչև ռուսներու վրայ հասնիլը»<sup>35</sup>:

Մեծ եւ աննկարագրելի է Լիւնի վանահոր՝ Նովհաննես վրդ. Նյուսյանի ծառայությունն իր ժողովրդին: Նա հոգում էր նաեւ այդ հազարավոր մարդկանց սնունդով ապահովելու խնդիրը. վանքում եղած մթերքի ողջ պաշարը տրվեց ժողովրդին: Ներագայում փրկվածները երախտազգիտությամբ են սա հիշում: Թեև վանքում սնունդը քիչ էր եւ հազիվհազ բավարարեց, սակայն ոչ ոք սովամահ չեղավ. «Եզներ կը մորթէին եւ միտք կերակուր բնելով՝ ժողովուրդին կը բաժնէին: Ուրելիքի կողմէ ժողովուրդը, պէտք է ըսել, որ այնքան ալ չենդուեցաւ, երբեմն չոր ցորեն բովելով (աղանձ), ժողովրդին կը բաժնէին, երբեմն ալ մաքուր հացի հետ թանապուր կամ մածուն, պանիր կու տային: Նոս տեղն է յիշել, որ շար մեծ ծառայութիւն մը եւ հայրական խնամք ու հոգացութիւն մը ցոյց տուաւ ժողովուրդին Լիւն Անապարի վանահայր Յովհաննէս վարդապետ Տիսեան (վանեցի), որ գիւղացոց ցորենները, բոլոր վանքի անասունները սեփականացնելով՝ հաւասարապէս ժողովուրդին վրայ բաժանեց: Այս վիճակով ժողովուրդը Լիւն Անապարին մէջ ապրեցաւ մօտ 24 օր»<sup>36</sup>: Բացի այդ, փրկվածներն իրենց հետ բերում էին ալյուր եւ այլ մթերքներ, իսկ երբեմն գիշերով գնում էին ափը եւ լքված գյուղերից սնունդ հայթայթում:

32 Սեդրակ Ապարտոբյանի վկայությունը, էջ 266: Մոյն վկայությունում փրկվածների եւ կղզում հավաքվածների թիվը քարերվում է մյուս վկայություններում եղածներից:

33 Գասպար Դավիթյանի վկայությունը, էջ 291. Կեն նաեւ Կարապետ Նակոբյանի, Սեդրակ Միսաքյանի, Տ. Արիստակես Բարեղամյանի վկայությունները, էջ 288-293:

34 Անդ, էջ 292:

35 Առաքել Ղարիբյանի վկայությունը, էջ 228:

36 Անդ, էջ 296:



Թշնամին փորձում էր գրավել Լիմ կղզին, բայց հանդիպում էր այնպեղ հասարակարկած հայերի գինված հակադարձությանը. «Ամեն օր թիւրք ու բիւրբն կու գային ծովափ, կը սկսէին ոմբակոծել ու սարսափ ազդել, որ մենք անձնաբոս լինէինք, սակայն ամեն անգամ հանդիպելով մեր դիմադրութեան՝ կը թողնէին, կը հեռանային»<sup>37</sup>: Թեւեւ հարակ չենք կարող նշել, թե որքան է եղել Լիմ գնացածների թիվը, սակայն իրենց իսկ փրկվածների վկայությունների համաձայն՝ այն անցել է 8000-ից: Խոսվում է անգամ 12000-ի մասին. «Ժողովուրդը նաևերով քեղափոխուեց անապար, դա քեուեց երկու երեք օր. սարսափն ու նեղութիւնը սուկալի էր. Լիմում հավաքեց ատելի քան 12000 ժողովուրդ»<sup>38</sup>:

Կրոց անապարում պարսպարկածների մասին թեւեւ ավելի սակավ, բայց խոսուն վկայություններ ունենք: Ինչպես վերը նշեցինք, Թիմարի **Ասարկածաձին** գյուղի բնակիչներից ոմանք փրկվում են՝ Լիմ հեռանալով: Սակայն գյուղում անպաշտպան մնացած կանայք եւ երեխաներ կային. նրանք էլ կարողանում են քաշվել Կրոց կղզի. «Երկու օր, երբ մնացինք գիւղին մէջ եւ քեուանք, որ մեր վիճակը պիտի գէշնար, բոլոր կիներս միացանք գացինք ծովափ կրակ ըրինք, Կրոց անապարի մէջ եղած մարդիկ նա դրկեցին, մեզ քարան հոն: Տաց չկար, ցորենէ աղանձ կը շինէինք եւ օրական երկու անգամ քիչ մը կուրէինք: Տացի պարճառու քրոջս երեք երեխաները մեռան: Մենք 30 օր մնացինք Կրոց անապարը, մինչեւ կամաւորներու գարը»<sup>39</sup>: Երբ Վերին Սիփանից մի քանի գյուղացիներ կարողանում են հասնել Կոճերեր, քեուանում են որ կոճերերցիք պարտապարկում են նավերով գնալ դեպի Կրոց, իրենք էլ միանում են<sup>40</sup>: Այսպիսով, Կրոց են հասել նաև **Վերին Սիփանի** եւ **Կոճերերի** բնակիչներից:

Լիմում ու Կրոցում ապաստանածները մնում են մինչեւ 1915 թ. մայիսի սկիզբը, երբ ռուսական զորքերն ու հայ կամավորական խմբերն ազարագրում են Վասպուրականը: Ապա կղզիներից վերադառնում են իրենց գյուղերը, փորձում կրկին վերականգնել քանդված ու այրված քրները, վարուցանք անել իրենց արքերում: Այնուհանդերձ, 1915 թ. ապրիլյան եղեռնալից օրերը անթիվ ու անհամար անմեղ հայերի կյանք իւլեցին: Շարուշար բնակարեղիներից գրեթե ոչ ոք չիքրկվեց: Բագում էին դեպքերը, երբ քրղերը կամ թուրքերը գերել էին հայ կանանց եւ երեխաների. ռուսական զորքերի եւ հայ կամավորական խմբերի՝ Վասպուրական մքրնելու ժամանակ նրանց մի մասը կարողանում է փախչել եւ միանալ հայրենակիցներին, իսկ մյուսների ճակարագրերն անհայր են:

Եղեռնի օրերին անդառնալի կորուսքներ ունեցան նաև մենաստանների միարանությունները: Լիմ անապարի միարաններից Տակոր վրղ. Տակորյանը նահարակվում է կոտորածների օրերին, Ավերիս վրղ. Մեղրաքյանը՝ վախճանվում գաղթի ճանապարհին<sup>41</sup>, իսկ Տովհաննես վրղ. Տյուայանը՝ մնում է Լիմում մինչեւ հայերի վերջին նահանջը՝ 1918 թ., ապա հասարակվում Ս. Էջմիսում<sup>42</sup>: Կրոց անապարի վանահայրը՝ Եղիագար ծ. վրղ. Պերրոյանը եւ միարան-

37 Անղ, էջ 143-144:

38 **Ա-Պօ**, Մեծ դէպքերը Վասպուրականում 1914-1915 թականներին, Երեւան, 1917, էջ 213: Նույն փաստը քրն նաև **Ա. Փոխարևան**, նշվ. աշխ., էջ 53:

39 Այլուն Սահակյանի վկայությունը. «Տայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում». վերապրածների վկայություններ, հ. Ա., էջ 119-121:

40 Տեն Զարո Շարոյանի վկայությունը, էջ 305-306:

41 Տեն **Թ-Ղոյիկ**, Գողգոթա թրքահայ հոգևորականութեան եւ իր հօքին աղէքարի 1915 քարին, Անթիլիաս-Լիրանան, 1966, էջ 35:

42 Տովհաննես վրղ. Տյուայան. 1879-1943 թթ., վանեցի, ձեռնաղրվել է 1908 թ., եղել Լիմ անապարի



ներ Պողոս վրդ. Նաևորյանն ու Ներսես սարկավազը նահապարակվում են եղեռնալից օրերին. մենաստանի մյուս միաբաններն էին Սահակ վրդ. Արովմյանը, Պեպրոս վրդ. Շահինյանը, Սրեկիան վրդ. Աղազարյանը<sup>43</sup>: 1915 թ. Վանի առաջնորդարանից Գևորգ Ե. Կաթողիկոսին ուղղված մի գրությունից (հունիսի 8) պարզ է դառնում, որ Կրուց մենաստանը հայտնվել էր ծանր վիճակում. թուրք կառավարության կողմից իրր պահակ նշանակված 14 ոստիկանները սպանել էին մի վարդապետի ու մի դպրի, մակույկավարին և մշակին, թալանել եկեղեցու թանկարժեք սպասքը, գրքեր ու ձեռագրեր, հոգևորականների իրերը<sup>44</sup>:

1915 թ. հուլիսին ժուսական գործերը նահանջում են. դա ստիպում է Վասպուրականի հայությանը թողնել հայրենի եզերքը և գաղթել Արևելյան Նայաստան կամ Կովկասի այլ բնակավայրեր: Նովհաննես վարդապետ Նյուսյանը 1934 թ. գրած իր աշխատության մեջ ժուսական գործերի՝ 1915 թ. հուլիսյան մեծ նահանջն անվանում է «դիպրումնաւոր և աղէտաբեր նահանջ... հարիւր հազարաւոր հայ ժողովրդեան կորստեան հետ կորստեան մարմուտեան և փչացան նա ցեղին դարաւոր կուլտուրայի-սրբեղծագործութեան և գրականութեան անգին գանձերն և գոհարներն՝ հազարաւոր հարուր գրչագրեր և գանազան հնութիւններ»<sup>45</sup>:

Եղեռնալից իրադարձություններին սերտորեն առնչվում են հայ հոգևոր և նյութական մշակույթի մաս կազմող անգին գանձերի՝ ձեռագրերի ճակատագրերը: Ոստի՝ մի քանի խոսքով անդրադառնանք Լիմ և Կրուց անապատների ձեռագրական հավաքածուներին և Եղեռնի ժամանակ դրանց պահպանման խնդրին: 1915 թ. Արևմտյան Նայաստանում վանքերը համապարաժ թալանվեցին ու այրվեցին, հիմնահատակ քանդվեցին, իսկ այնպեղ պահվող անթիվ ու անհամար ձեռագրեր, տպագիր գրքեր, անգամ ամբողջ գրադարաններ անվերադարձ ոչնչացան<sup>46</sup>: Միայն մի փոքր մասը փրկվեց գաղթականների ձեռքով: Լիմում, Կրուցում, Աղթամարում, Վարազավանքում, Վանում գրվող ձեռագրերի պահպանման և Ս. Էջմիածին տեղափոխման դժվարին, գերմարդկային ջանքեր պահանջող գործը նախաձեռնում է Նովհաննես վանահայրը: Նրա ջանքերի շնորհիվ այս ձեռագրական հավաքածուները մասնակիորեն փրկվեցին՝ հակառակ գաղթի ճանապարհին եղած զգալի կորուստներին: Այսպես, հուլիսյան մեծ գաղթի ժամանակ, Վասպուրականից Էջմիածին են տեղափոխվում 284 ձեռագիր (Աղթամարից՝ 201, Վանից և շրջակայքից՝ 61, Լիմից՝ 22), իսկ մնացածը՝ առժամանակ թաքցվում: Նույն թվականի հոկտեմբերին Գևորգ Ե. Կաթողիկոսը,

վանահայր: 1941 թ. ազգային-եկեղեցական ժողովի ժամանակ Ս. Էջմիածնի միաբանությունը ուներ չորս հոգևորական, որոնցից մեկը Նովհաննես վրդ. Նյուսյանն էր, մյուսներն էին՝ կաթողիկոսական տեղակալ և Գերագույն հոգևոր խորհրդի նախագահ Գևորգ արքեպս. Չորեքչյանը, Արսեն արքեպս. Ղյուրջյանը, Մարթեոս վրդ. Աջեմեանը. տե՛ս «Վավերագրեր Նայ Եկեղեցու պատմության», գիրք Զ., Երևան, 1999, էջ 282-283, 922:

43 Տե՛ս **Թ. Լողիկ**, նշվ. աշխ., էջ 35-36: Աղթամարի վանքի մասին նշենք, որ կոտորածի առաջին իսկ օրերին այն ամայանում է և անցնում թշնամու ձեռքը: Վանքի երկու միաբանները՝ կաթողիկոսական տեղապահ Եզնիկ վրդ. Ներկարարյանը և Դանիել վրդ. Զաղոյանը, թողնելով կղզին և անցնելով ցամաք, քաջարար մասնակցում են Վանի հերոսամարտին, իսկ Աղթամարն անցնում է թշնամու ձեռքը. տե՛ս **Ն. Ոսկեան**, Վասպուրական-Վանի վանքերը, Վիեննա, 1940, էջ 131:

44 Տե՛ս ՆԱԱ, ֆ. 57 (Կաթողիկոսական դիվան), ց. 5, գ. 54, թ. 28-29:

45 **Նովհաննես վարդապետ Նիսեան**, Նամասոք նկարագրություն Վասպուրականի մեջ եղած մի քանի նշանաւոր վանքերու, որոնք մինչև 1915 թուական շին և միաբանական վանքեր էին, աշխ.՝ Գ. Տեր-Վարդանեանի. «Արեւագալ» պարբերական, 2004, էջ 111:

46 Արևմտյան Նայաստանի ձեռագրական կորուստների մասին հանգամանալից են Օնիկ Եգանյանի և Սուրեն Քոլանջյանի ուսումնասիրությունները. Վասպուրականի ձեռագրերի մասին տե՛ս «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մարտնադարանի», հ. Ա., Օ. Եգայան, Երևան, 1965, էջ 93-105. **Ս. Քոլանջյան**, Նայկական կոտորածները և մեր ձեռագրական կորուստները. «Էջմիածին», 1965, Ե.-Է., էջ 133-144:

բաջ գիտակցելով Արևմտյան Նայաստանում Կրիստոսի դժոխային կացությունը, կարգադրում է Նովիաննես վանահորը և Կրոնոս անապարի միաբան Սյրեփան վարդապետին կրկին վերադառնալ հայրենիք, և, հավաքելով մենաստանների բոլոր ձեռագրերն ու թանկարժեք հնությունները, կանոնավոր ցուցակագրել և փոխադրել Ս. Էջմիածին<sup>47</sup>:

Վանի և շրջակայքի մշակութային արժեքների պահպանման առթիվ մտահոգություն է հայտնում նաև Պերերբուրգի գիտությունների ակադեմիայի նախագահությունը: Վերջինիս հանձնարարությամբ Կովկասյան (Թիֆլիսի) թանգարանի ավագ հսկիչ Սմբատ Տեր-Ավետիսյանը մեկնում է Վան, սակայն մինչ այդ ուղերձ է գրում Գևորգ Ե. Կաթողիկոսին՝ խնդրելով, որ Վան գնացած վարդապետներից մեկը այս գործում նշանակվեր որպես հոգևոր իշխանության ներկայացուցիչ<sup>48</sup>: Կաթողիկոսը արտոնում է Նովիաննես վարդապետին և պատվիրում, որ հավաքված իրերը տեղափոխվեն ուղղակի Էջմիածին և ոչ Թիֆլիս:

Վերադառնալով Վասպուրական՝ Նովիաննես վարդապետը սրբի խոր ցավով ականապես է լինում, որ բավականին թվով արժեքավոր ձեռագրեր և թանկարժեք սպասք բռնազրավված է: Այս մասին նա Վեհափառին ուղղված իր տեղեկագրության մեջ գրում է. «Ս. Օծուրեանդ հայրական բարձր հրամանի համաձայն ողջամբ հասանք երկիրը և Լիմ անապարի կղզին մտնելով գրասեղ գայն աւերակ և կողոպտուած վիճակի մէջ: Եկեղեցոյ և ամբողջ սենեկաց դռները խորպակուած, ձեռագիրներու ընդիր մասը վերցուած է. կը մնան ճատընփիր Յայսմաուրբներ և մաս մը անարժէք ձեռագրեր...» (10 նոյեմբեր, 1915 թ.)<sup>49</sup>: Նույն ուղերձում վանահայրը նշում է, որ Կրոնոս անապար դեռ չեն կարողացել գնալ նավ ջուրնալու պարճառով, իսկ Վարագա վանքը թալանված և այրված է. այնտեղ ձեռագրերով և թանկարժեք սպասքով միայն մեկ պահարան են գտնում, որ, բարեբախտաբար, վրիպել էր կողոպտիչների աչքից: Պահարանից ամենը հանում, փանում են Վան: Բոլոր եկեղեցիներն առհասարակ թալանված և այրված էին:

Ի վերջո, Նայաստանի պատվերով (21 նոյեմբեր) Լիմի վանահայր Նովիաննես վարդապետի, Կրոնոսի միաբան Սյրեփան վարդապետի, Աղթամարի միաբան Դանիել վարդապետ Զադոյանի և Սմբատ Տեր-Ավետիսյանի ջանքերով Լիմում մնացած ձեռագրերը, Վարագավանքում գտնվածները, Վանի եկեղեցիներից փրկվածները, նաև՝ Կրոնոսից և Աղթամարից բերվածները հավաքվում են, ցուցակագրվում և 1916 թ. հունվարի 27-ին տեղափոխվում Ս. Էջմիածին. ընդհանուրը՝ 1082 ձեռագիր (Աղթամարից՝ 84, Վանից՝ 173, Կրոնոսից՝ 187, Լիմից՝ 281, Վարագից՝ 357. սրանցից 9-ը եղել են փակագիր գրքեր): Էջմիածնում ձեռագրերը հանձնվում են մատենադարանապետ Նուսիկ արքեպս. Մովսիսյանի խնամապարտությանը<sup>50</sup>: Ձեռագրերից բացի՝ տեղափոխվել են նաև թանկարժեք եկեղեցական սպասք, սրբերի մատուցանքներ<sup>51</sup>:

Վասպուրականից բերված բոլոր ձեռագրերը նկարագրվում են Էջմիածնի մատենադարանի գրքապահ Գագրիկ Ներսիսյանի կողմից (Գագրիկյան ցուցակ)<sup>52</sup>: Այսպիսով, 1915-

47 Տե՛ս «Արարար», 1915, էջ 811:

48 Տե՛ս անդ, էջ 860-862:

49 Անդ, էջ 863:

50 Տե՛ս «Արարար», 1916, էջ 46-47:

51 Վանի և շրջակայքի եկեղեցիների վիճակի, պահպանված մշակութային արժեքների մասին տե՛ս նաև «Վան-տոսպ» շաբաթաթերթ, 1915, Թիֆլիս, հմր. 3, էջ 13. «Վավերագրեր Նայ Եկեղեցու պատմության», գիրք ԺԳ., Երևան, 2005, էջ 570-571:

52 ՄՄ, Անրիպ ձեռագրացուցակների ֆոնդ, հմր. 6:

1916 թթ. Վասպուրականից Էջմիածին է տեղափոխվել 1366 ձեռագիր: Վասպուրականից եկած ձեռագրերի մասին ասենք, որ 1916-1917 թթ. Թիֆլիսում Մ. Մաքսուդյանի և Մ. Տեր-Մովսիսյանի ջանքերով Վասպուրականի գաղթականներից եւս 15 ձեռագիր է սրացվել, իսկ հետագայում փարբեր անձանց կողմից Մաքենադարան են բերվել եւս 18-ը: 1916 թ. մայիսին Նյուսյան վարդապետը Վանից եւ մոփակայքից ձեռագրեր է ուղարկել Էջմիածին Զուլֆայի վրայով, սակայն մաքսային վարչությունը թույլ չի տվել դրանք անցկացնել: Միայն Վեհափառի կարգադրությունից հետո այս ձեռագրերը մուտք են գործել Էջմիածին, որոնք թվով 87-ն են (սրանցից 20-ը՝ այլալեզու)<sup>53</sup>: Սակայն 1934 թ. Նովհաննես վարդապետը իր «Նամատուր նկարագրություն...» աշխատության մեջ նշում է, որ եւս 660 ձեռագիր է ուղարկել Էջմիածին, որից 400-ը կապիտան Չանկայանի, իսկ 260-ը՝ բժիշկ Առաքել Գարադոշյանի միջոցով: Մեզ, ցավոք, հայտնի չէ այս ձեռագրերի ճակատագիրը: Ոչ «Գագրիկյան» ցուցակում, ոչ էլ հետագա որեւէ արձանագրությունում սրանք չեն հիշատակվում: Ո՞ր կորան այդ ձեռագրերը. Նովհաննես վարդապետը կարո՞ղ էր արդյոք թյուրիմացաբար նման բան գրել: Ի վերջո, խոսքը ոչ թե մի բանի փասնյակ, այլ մի բանի հայտնի ձեռագրերի մասին է. այս հարցը առայժմ մնում է անպատասխան:

Այսպիսով, Վանա լճի Աղթամար, Լիմ եւ Կրուց կղզիներից, Վանից եւ մերձակա գյուղերից 1915 թ. Ս. Էջմիածին է տեղափոխվել 284, 1916 թ. հունվարին՝ 1082 ձեռագիր, ապա՝ եւս 87-ը, սրանց գումարվել են գաղթականներից ձեռք բերված 15 եւ ընծայված 18 ձեռագիր: Այս 1496 միավորներից 9-ը եղել են փապգիր գրքեր, 1-ը՝ այլեւայլ թղթերի հավաքածու, 4-ը մասն են կազմել այլ ձեռագրերի եւ հետագայում միացվել են դրանց, 9 ձեռագիր նորից ետ է հանձնվել Լիմի Նովհաննես վանահորը: **Արդյունքում՝ Մաշտոցյան Մաքենադարանում այժմ ունենք Վասպուրականից տեղափոխված 1473 ձեռագիր. Վանից եւ շրջակայքից՝ 335, Աղթամարից՝ 285, Լիմից՝ 306, Կրուցից՝ 202, Վարազից՝ 345**<sup>54</sup>: Նշենք նաեւ, որ Լիմից երկու ձեռագիր պահպանվել է հասել են Քյուրդյան հավաքածու, իսկ Կրուց անապարից մի ձեռագիր գտնվում է Պերերբուրգում<sup>55</sup>: Փորձենք ճշտել, թե շուրջ բանի՞ ձեռագիր կար Վանա լիճի կղզիներում Եղեռնից առաջ:

Ղեռուս համիդյան ջարդերի ժամանակ՝ 1895-96 թթ., ձեռագրերը ոչնչացումից փրկելու համար Լիմում, Կրուցում եւ Աղթամարում, շար այլ վանքերի պես, ձեռագրերը պահվել են թաքստոցներում: Եւ այսպես շուրջ 14 փարի մնացել են անձեռնմխելի, մինչեւ ազգագրագետ Ե. Լալայանը նախաձեռնում է Վասպուրականի գրչագրերի ցուցակի կազմման գործը<sup>56</sup>: Այս նպատակով նա այցելում է Վանա լճի կղզիները, խոնավ թաքստոցներից հանում ձեռագրերը, դրանք մաքրում եւ չորացնում արեւի փայլ: Թեւեւ անվանի հայագետը մտադիր էր կազմել առհասարակ Վասպուրականի բոլոր ձեռագրերի ցուցակը, սակայն նրան հաջողվում է նկարագրել 1525 ձեռագիր, որոնք պահվում էին Աղթամար, Լիմ, Կրուց վանքերում, Վարազավանքում, Վան քաղաքի եւ շրջակայքի եկեղեցիներում<sup>57</sup>: Տիպը ընդունելով Օ. Եզան-

53 Տե՛ս «Արարապ», 1916, էջ 344:

54 Տե՛ս «Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մաքենադարանի», հ. Ա., էջ 99-105:

55 Տե՛ս Ս. **Քոլանջյան**, նշվ. աշխ., էջ 140:

56 480 ձեռագրերի նկարագրությունները հրատարակվել են 1915 թ. Թիֆլիսում, մյուս մասը դեռուս անփիլ (Մաքենադարան անփիլ ձեռագրացուցակների ֆ., հմբ. 8):

57 Վասպուրականի ձեռագրերին անդրադարձել է նաեւ Վարազ վանքի միաբան Ղեռուզ վ. Փիրղալնյանը՝ իր «Նշխարք պարսութեան հայոց» աշխատության մեջ: Սակայն նա ընդօրինակել է միայն պարսկական կարեւորություն ունեցող հիշատակարանները (ՄՄ, ձեռ. հմբ. 4515, 6273): Ամբողջական չէ նաեւ Նովհաննես Բարաղամյանի կազմած ցուցակը (ՄՄ, ձեռ. հմբ. 6333):

յանի կազմած համեմատական ցուցակները՝ կարելի է ասել, որ Ե. Լալայանի նկարագրած ձեռագրերի մի մասը՝ շուրջ 650 ձեռագիր, կորել է Մեծ Եղեռնի օրերին: Ե. Լալայանի նշյալ ցուցակում րեղ են գրել Լիմից 374 ձեռագրեր, որոնցից պահպանվել են 182-ը, Կրուցից՝ 264 ձեռագիր, պահպանվել են 154-ը, Աղթամարից՝ 286 ձեռագիր, պահպանվել են 202-ը: Միաժամանակ, այս կղզիներից մեզ հասել են ձեռագրեր, որոնք չկան Ե. Լալայանի ցուցակում: Բավականին կարևոր է Նովհաննես վանահոր այն փվյալը, թե մինչ Եղեռնը Լիմ անապարի ձեռագրերի թիվը հասնում էր 550-ի, իսկ փպագիր գրքերինը՝ 3 հազարի, Կրուց անապարն էլ ճոխ ու փարթամ էր ազգային եւ եկեղեցական թանկարժեք հնություններով, ուներ նաեւ մոտ 500 ձեռագիր մատրյան<sup>58</sup>: Ուստի, կարելի է ենթադրել, կղզիներում պահվող ոչ բոլոր ձեռագրերի նկարագրություններն են րեղ գրել Լալայանի ցուցակում: Սակայն, միանշանակ չէ նաեւ այն, որ Վանի, Վարագի, Աղթամարի, Լիմի եւ Կրուցի անունով Մարենադարան հասած այն բոլոր ձեռագրերը, որոնք չկան Լալայանի ցուցակում, պարկանել են այս վանքերին: Այսպես, Ս. Քոլանջյանը ենթադրում է, որ ձեռագրերը Ս. Էջմիածին րեղափոխելիս այլ վայրերից փրկված ձեռագրեր էլ են խառնվել, բայց չի նշվել դրանց պարկանելությունը<sup>59</sup>: Ամփոփելով ասենք, որ Լիմում եւ Կրուցում պահվող ձեռագրերի շուրջ կեսը, փպագիր գրքերն ամբողջությամբ կորել են կամ ոչնչացել, իսկ հրաշքով փրկված, պահպանված ձեռագրերը միայն բացառիկ անձնագոհության արդյունք են:

Այսպիսով, Մեծ Եղեռնի օրերին Լիմ եւ Կրուց մենաստաններն արել են հնարավորը հայությանը բնաջնջումից փրկելու համար, ապաստանածներին փվել են ամենը, ինչ ունեին, իսկ Լիմի վանահոր ու մի քանի նվիրյալների ջանքերով ըստ հնարավորության փրկվել են շար ձեռագրեր՝ որպես սուրբ մատունքներ Վասպուրական աշխարհից: Վասպուրականում մնացած հայերը վերջին անգամ գաղթում են 1918 թվականին՝ թողնելով թշնամու ձեռքին մի ողջ հայրենիք:



58 Տե՛ս Յովհաննէս վարդապետ Տիւսան, նշվ. աշխ., էջ 111, 114:

59 Տե՛ս Ս. Քոլանջյան, նշվ. աշխ., էջ 142: